Ч-15380

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«30» 11 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0214-23

Ձեռնարկողը՝ **«ՍԱՆՆ ՄԵՏ» ՓԲԸ**
Կոտայքի մարզ, Հրազդան, Դուրյան փողոց, 12 շենք, բն. 22

Գործունեությունը՝ **Արթիկի «ՍՏԵԿԼՈՄԱՇ» գործարանի ձուլման արտադրամասի վերազինման՝ պողպատե ձուլակտորների արտադրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**
Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ եզրակացությունը 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0214-23

«30» Հոկտեմբերի **2023թ.**

Արթիկի «ՍՏԵԿԼՈՄԱՇ» գործարանի ձուլման արտադրամասի վերազինման՝ պողպատե ձուլակտորների արտադրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ՍԱՆՆ ՄԵՏ» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, Նախագծային փաստաթուղթ
Տեղադրման վայրը՝	Շիրակի մարզ, Արթիկ համայնք

Ներածական մաս. ՍԱՆՆ ՄԵՏ» ՓԲԸ-ի /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից նախատեսվող Արթիկի «ՍՏԵԿԼՈՄԱՇ» գործարանի ձուլման արտադրամասի վերազինման՝ պողպատե ձուլակտորների արտադրության կազմակերպումն իրականացվելու է Շիրակի մարզի Արթիկ քաղաքի Գործարանային թիվ 2 հասցեում՝ որտեղ նախկինում արտադրվել է ապակե տարաների պողպատե կաղապարներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի, 5-րդ մասի, 5)-րդ կետի դ) ենթակետի, պողպատե ձուլակտորների արտադրության կազմակերպումը՝ որպես նախատեսվող գործունեություն դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նկարագրական մաս. Գործարանի տարածքը, որտեղ կազմակերպվելու է Ընկերության կողմից նախատեսվող արտադրությունը, գտնվում է Արթիկ խոշորացված համայնքի Արթիկ բնակավայրի արդյունաբերական գոտում: Տարածքն ամբողջովին օգտագործվել է արտադրական նպատակով, որտեղ հողային ծածկույթը բացակայում է, գործարանի պարսպի երկայնքով կանաչապատված է բարդիների ծառաշերտով: Գործարանին հարակից տարածքներում գործում են այլ արտադրական կազմակերպություններ, սպասարկման օբյեկտներ և պահեստային տարածքներ: Տարածքից 590 մ հեռավորության վրա անցնում է Արթիկ-Գյումրի մայրուղին, իսկ 500 մ հեռավորության վրա՝ Արթիկ-Գյումրի երկաթուղային գիծը: Արտադրամասը, որտեղ իրականացվելու է գործունեությունը, մոտակա բնակելի թաղամասից գտնվում են 510 մ-ից մինչև 640 մ հեռավորությունների վրա: Անմիջապես արտանետման աղբյուրից մոտակա բնակելի շենքը գտնվում է 575 մ հեռավորության վրա: Անմիջապես ներկայացվող տարածքում օդային ավազանի և հողերի աղտոտվածությունը որոշելու համար Ընկերության կողմից պասիվ նմուշառիչներով կատարվել է նմուշառումներ /հողի նմուշառումը՝ գործարանի տարածքի չորս կետից/, որոնք ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ լաբորատորիայում լաբորատոր անալիզիեն ենթարկվել, որոնց արդյունքները բերված են ՇՄԱԳ հաշվետվության հավելվածներում:

Գործարանային փողոց թիվ 2 հասցեում առկա շենք շինությունները, հողամասը, գույքն ու սարքավորումները պատկանում են «ՍՏԵԿԼՈՄԱՇ» ԲԲԸ-ին: Գործարանում երկար տարիներ իրականացվել է պողպատի ձուլում, այնուհետև ընդհատվել է արտադրական գործունեությունը, ներկայումս Ընկերության կողմից նախատեսվում է

կրկին վերագործարկել արտադրությունը: Գործարանի հողամասում առկա են 35.04295 քմ մակերեսով շինություններ, «ՍԱՆՆ ՄԵՏ» ՓԲԸ-ի կողմից արտադրությունը կազմակերպելու համար օգտագործվելու է 4711.63 քմ մակերեսով արտադրական շինությունը: Պայմանագրային հիմունքներով օգտագործելով գործարանի շենք-շինությունները, հողամասը, գույքն ու սարքավորումներն Ընկերությունն իրականացնելու է լրացուցիչ ներդրումներ՝ մետաղի ձուլման արտադրության տեխնոլոգիական գործընթացների արդիականցման և վերազինման ուղղությամբ: Արտադրական տարածքում առկա են բոլոր ինժեներական ենթակառուցվածքները /գազամատակարարում, էլեկտրամատակարարում, ջրամատակարարում և կոյուղի/, որոք անհրաժեշտ են գործունեությունը կազմակերպելու համար: Հիմնական մասնաշենքը, որտեղ տեղադրված են և նախկինում շահագործվել են գազային և էլեկտրական վառարաններ, կահավորված է գազերի զտման համակարգով, օդափոխության համակարգով: Գործարանում տեղադրված հալման կաղապարման հանգույցներով 2 վառարանների տարեկան արտադրական հզորությունը կազմել է 25000 տոննա պողպատյա ձուլակտորներ: Արտադրական հանգույցի վերազինման և մետաղի հալման համար Ընկերությունը նախատեսվում է տեղադրել երկու մագնիսական ինդուկցիոն վառարաններ, որոնք կապահովեն ժամում 3 տոննա, կամ տարեկան 15.000 տոննա արտադրողականությամբ պողպատե ձուլակտորների արտադրություն: Ձուլակտորները կունենան ուղղանկյուն կտրվածք, իսկ երկարությունը կարող է կազմել 1 – 3 մ կամ ավելին՝ ըստ պատվերի: Արտադրության կազմակերպման համար Ընկերությունը արտերկրից ներմուծելու է նոր ժամանակակից ձուլման և գլանման սարքավորումներ: Վերազինման աշխատանքների արդյունքում տեղադրվելու են նաև նոր կառավարման համակարգեր, գազամաքրման սարքավորումներ, մասնակի կփոխարինվեն խողովակները, փականները:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հումք կհանդիսանա սև մետաղների /պողպատի/ ջարդոնը, որը ընկերությունը կարող է ձեռք բերել տարբեր կազմակերպություններից և թափոնավայրերից: Հումքի ընտրությունը կատարվելու է այնպես, որ բացառվի այլ մետաղների, մասնավորապես՝ թուջի պարունակությունը:

Հումքը ավտոտրանսպորտային միջոցներով կտեղափոխվի Արթիկի «ՍՏԵԿԼՈՄԱՇ» գործարանի տարածք և կպահեստավորվի գործարանի տարածքում գոյություն ունեցող պահեստային մասում: Մետաղը սայլակներով կտեղափոխվի ձուլման տեղամաս, որտեղ նախատեսված է տեղադրել 2 հատ ինդուկցիոն վառարաններ, այնուհետև ձուլման ենթակա մետաղը կբեռնվի վառարանի հնոց: Վառարանի հնոցում ջերմաստիճանը պահպանվում է 1670° C մակարդակի վրա: Հալվածքը վառարանից հոսում է դեպի հալվածքի տեղափոխման վաք (շերեփ), որը նախապես տաքացվում է մինչև 1200°C այնուհետև լցվում ձուլման սարքի մեջ: Ձուլման սարքի ելքն ունի որոշակի ձև, որն ապահովում/ձևավորվում է ձուլվածքի տեսքը: Ինդուկցիոն վառարանները կահավորված են կառավարման վահանակով, ինչը թույլ է տալիս վերահսկել վառարանի հալվածքի ջերմաստիճանը: Ելնելով տվիչի ցուցիչից կարգավորվում են նաև հումքի լրացման կամ հալվածքի դուրս բերման գործընթացները:

Հալվածքի կտրվածքը և երկարությունը կարգաբերվում են ըստ պատվիրատուի առաջադրանքի: Տեղամասի պլանային արտադրողականությունը նախատեսված է 15 000 տ/տարի: Ձուլակտորները շարժվելով հովացնող վաքով՝ տեղափոխվում են պահեստ: Մետաղի որակը վերահսկելու համար վառարանից վերցվում է նմուշ և ստուգվում լաբորատորիայում: Նախատեսվում է ապահովել ՌԴ ԳՈՍՏ-երին համապատասխան մետաղի որակ:

Տեխնոլոգիական գործընթացը կառավարվելու է ավտոմատ հսկիչ և կարգավորիչ սարքերի միջոցով: Սարքերը հսկելու են հնոցի ջերմաստիճանը և անհրաժեշտության

դեպքում կարգաբերում են օդային հոսքը կամ հոսանքի ծախսը: Արտադրական գործընթացում կօգտագործվի նաև բնական գազ՝ վառարանների ջերմային ռեժիմն ապահովելու համար:

Պողպատաձուլման գործընթացում օգտագործվելու են խարամագոյացման նյութեր՝ կիր և շպատ: Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տեխնիկական ինչպես նաև անձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար: Տեխնիկական նպատակներով ջուրը նախատեսված է միայն շրջանառու հովացման համակարգի կորուստների լրացման համար: Արտադրական գործընթացում արտադրական հոսքաջրեր չեն առաջանա:

Գործարանը միացված է համայնքային ջրամատակարարման ցանցին: Ըստ անհրաժեշտության կվերանայվեն արտադրական նպատակով ջրօգտագործման քանակները և «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության հետ ջրօգտագործման և ջրահեռացման պայմանագիրը կթարմացվի: ՇՄԱԳ-ում հաշվարկները կատարվել են առավելագույն՝ 15 000 մ^3/տարի արտադրական ցուցանիշի հիման վրա: Շրջանառու համակարգի համար ջրի ծավալը կկազմի՝ 200 մ^3/տարի, կամ 20 մ^3/օր: Արտադրամասի 800 մ^2 բաց տարածքի ջրցանման համար տարեկան ջրի ծախսը կկազմի՝ 336 մ^3: Առավելագույն՝ 60 հոգի աշխատողների համար *խմելու-տնտեսական կարիքների ջրածախսը կկազմի* 362.0 մ^3/տարի, կամ 1.392 մ^3/օր, իսկ տնտեսակենցաղային հոսքաջրերի հաշվարկային քանակը կկազմի՝ 343.9 մ^3/տարի կամ 1.32 մ^3/օր: Կենցաղային կեղտաջրերը գործող կոյուղու ներքին ցանցի միջոցով կմիացվեն արտադրական գոտու հարևանությամբ անցնող քաղաքային կոյուղատարին: Ձուլման գործընթացում բաց շփման եղանակով ձուլված մետաղը հովացնելու ադյունքում ջուրը կարող է աղտոտվել մեխանիկական խառնուրդով: Հովացման ջուրը ինքնահոս հոսում է պարզարան, որտեղ մեխանիկական մասնիկները նստելուց հետո, կրկին պոմպերով մղվում է մետաղի հովացման համակարգ:

Հալման վառարանները կահավորված են գազաօդային խառնուրդի արտազատման խողովակներով, որոնք միացված են գազամաքրման համակարգին: Հալման և տանիքի զոնտերի արտանետումները երկու օդամղիչներով մղվում են դեպի գազամաքրման համակարգ: Գազամաքրման համակարգը նախատեսված է կահավորել թևքային զտիչներով, որտեղ կատարվելու է պինդ մասնիկների որսում: Թևքային զտիչների համակարգը կահավորված է թափահարող սարքով, որը պարբերաբար թափ տալով մաքրում է թևքերի մակերեսը: Վառարանների յուրաքանչյուր անջատման ժամանակ իրականացվելու է թևքային զտիչների արտաքին զննում և վնասված պարկերի հայտնաբերման դեպքում՝ դրանք փոխարինվելու են նորերով: Ըստ նման արտադրությունների փորձի՝ տարեկան փոխարինվող պարկերի քանակը կտատանվի 120 – 150 կգ սահմաններում: Համապատասխան առաջարկի բացակայության դեպքում նախատեսված է տեղադրել ցիկլոնների շարք, որոնք նույնպես կարող են ապահովել կլանման առնվազն 95 տոկոս ցուցանիշը:

Արտադրական գործընթացը կազմակերպելու արդյունքում մթնոլորտային օդի վրա ազդեցությունը պայմանավորված է մետաղի ջարդոնի հալման, ձուլման ընթացքում առաջացող վնասակար արտանետումներով: Ձուլման արտադրամասի վերազինման գործընթացի արդյունքում, սև մետաղների ձուլման արտադրամասում կառաջանան՝ ազոտի երկօքսիդ (NO_2), ածխածնի օքսիդ (CO), պինդ մասնիկներ (ՊՄ) /անօրգանական փոշի/:

Հալված մետաղի հետագա վերամշակման՝ ձուլման և գլոսման ժամանակ, շերեփների ջերմային նախապատրաստման համար օգտագործվում է բնական գազ, որի այրման ընթացքում առաջանում են ազոտի և ածխածնի օքսիդների արտանետումներ: Արտանետումների հաշվարկները կատարվել են առավելագույն՝ 15 000 տ/տարեկան արտադրական ցուցանիշի համար: Արտանետումների քանակների հաշվարկները

կատարվել են հիմք ընդունելով բնական գազի այրման ընթացքում առաջացող նյութերի տեսակարար գործակիցները: Հաշվարկը կատարվել է գազի առավելագույն՝ 45 մ^3 ծախսի հիման վրա: Տարեկան առավելագույն արտադրողականության պայմաններում 675 հազար մ^3 գազի դեպքում արտանետումների քանակները կկազմեն՝ ազոտի երկօքսիդ՝ 1.45 տ/տարի, ածխածնի օքսիդ՝ 8.7 տ/տարի:

ՇՄԱԳ-ում տեխնոլոգիական գործընթացների համար կատարվել են արտանետումների հաշվարկներ՝ վերամշակվող մետաղի ջարդոնի առավելագույն քանակի համար: Ըստ գործող մեթոդական փաստաթղթերի՝ սև մետաղների երկրորդային արտադրության /հալում, ձուլում/ ընթացքում վերամշակվող մետաղի արտադրողականության դեպքում առաջացող արտանետումների ընդհանուր տարեկան քանակները կկազմեն՝ ազոտի երկօքսիդ – 5.5տ, ածխածնի օքսիդ – 29.7տ, պինդ մասնիկներ - 6.6տ /իսկ մինչև մաքրումը՝ 132.0տ/:

Արտանետումների ազդեցությունը գնահատելու նպատակով կատարվել են մթնոլորտում դրանց ցրման հաշվարկ՝ «Էոա» ծրագրով, որոնց արդյունքները համեմատվել են բնակավայրերի համար սահմանված սանիտարական նորմերի հետ: Համաձայն կատարված հաշվարկների արդյունքների՝ աղտոտվածության առավելագույն մակարդակները բոլոր նյութերի համար գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում և առավելագույն գետնամերձ կոնցենտրացիաները ՍԹԿ մասով կազմում են՝ ազոտի երկօքսիդ – 0.2315, ածխածնի օքսիդ – 0.84395, անօրգանական փոշի – 0.3293:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվել է միայն օդային ավազանի համար, ինչը հաշվարկվել է 657800 դրամ/տարի: Ըստ 245-71 սանիտարական նորմերի պողպատաձուլական գործարանի սանիտարա-պաշտպանիչ գոտին սահմանված է 500 մ, ինչն ապահովված է, քանի որ արտանետման աղբյուրից մոտակա բնակելի տների հեռավորությունը 575 մ է:

Գործարանի շահագործման արդյունքում առաջացող արտադրական թափոնների տեսակները ներկայացված են ստորև.

Թափոնի անվանումը ըստ անձնագրի	*Թափոնի ծածկագիրը*	*Քանակը, տարի*	*Վտանգավո-րության դասը*
Էլեկտրավառարանների խարամ	3120180001004	750.0	IV
Փոշեորսիչ սարքավորումների աղ րունակող կոշտ մնացորդներ (այրման և ոլիգի միջոցով թափոնների ամշակման ժամանակ)	3130120001013	125.4	III
Զտիչ գործվածքներ և պարկեր՝ աակար (անօրգանական) րոտվածությամբ	5820020001013	0.2	III

Բոլոր տեսակի թափոններ հավաքումը, ժամանակավոր պահեստավորումը, հետագա օգտագործումը կամ լիցենզավորված կազմակերպություններին տրամադրումը կկատարվի՝ նախորոք մշակված և շրջակա միջավայրի նախարարության հետ համաձայնեցված թափոնների անձնագրերի համաձայն:

Պողպատաձուլական գործարանի շահագործման ընթացքում առաջացող կենցաղային աղբը՝ 19.2 մ^3/տարի ծավալով, պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի Արթիկի քաղաքային աղբավայր:

Պողպատաձուլական գործարանում բացակայում են վիբրացիա առաջացնող սարքավորումները: Գործարանում աղմուկի աղբյուր են հանդիսանում օդի կոմպրեսորները,

տրանսպորտային միջոցները և արտադրական մասնաշենքում տեղադրված սարքավորումները, որոնց աղմուկի մակարդակը շենքից դուրս չի գերազանցի 50 դԲա-ն:

Ներկայացվող գործունեության հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերը կապված են աշխատակիցների անվտանգության պահպանության և ազդակիր բնակչության առողջության ապահովման հետ և պայմանավորված են պողպատի հալման, ձուլման ընթացքում վառարանների բարձր ջերմային ռեժիմով՝ գործընթացի ընթացքում առաջացող արտանետումներով /տոքսիկ նյութեր, մասնավորապես ազոտի, ածխածնի օքսիդներ և պինդ մասնիկներ/ և դրանց հետ կապված հնարավոր ռիսկերի առաջացմամբ: Թվարկված ազդեցությունները կանխարգելելու և նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են նաև բնապահպանական միջոցառումների կառավարման և մոնիթորինգի պլաններում: Մասնավորապես՝ օդային ավազանն աղտոտումից պահպանելու միջոցառումները ներառում են.

- արտադրական մասնաշենքի ապահովում օդափախության համակարգով,
- հալման վառարանների, շերեփների և հոսքագծի կահավորում օդաքարշ համակարգով, ձուլման տեղամասի կահավորում քարշիչ զոնտերով,
- բոլոր տեսակի արտանետումների հավաքում՝ մեկ խողովակի մեջ և մաքրում գազամաքրման համակարգում,
- արտադրական տարածքում արտանետումների մոնիթորինգի իրականացում՝ անհրաժեշտության դեպքում՝ սարքավորումների կարգաբերում:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով կարևորվում են հետևյալ միջոցառումները.

- հովացման գործընթացի իրականացում՝ շրջանառու համակարգի միջոցով,
- արտադրական արտահոսքի հավաքում ավազաններում, որտեղ կիրականացվի կախված մասնիկների նստեցում
- ավազանում մաքրված ջրերի շրջանառու վերադարձ և օգտագործում՝ հովացման համակարգում:

Հակահրդեհային նպատակով նախատեսված են ջրի պահուստային տարողություններ: Գործարանում ներկայում առկա են աշխատանքի անվտանգության ապահովման և արտակարգ իրավիճակներին արձագանքման բոլոր անհրաժեշտ կահավորանքները և սարքավորումները: Աշխատանքի անվտանգության ապահովման միջոցառումներից կարևորվում են հետևյալները.

- սպասարկող անձնակազմի համար արտադրական տարածքում թափոնների հետ աշխատելու և արտադրական գործընթացի շահագործմանն ուղղված ուսուցողական դասընթացների կազմակերպում և գիտելիքների ստուգում,
- մետաղի պահեստավորման իրականացում հատուկ հատկացված պահեստային տարածքներում,
- թափոնների հետ աշխատելիս հետևել, որպեսզի անձնակազմը կրի հատուկ անհատական պաշտպանիչ միջոցներ՝ ձեռնոցներ, դիմակներ և արտահագուստ,
- վառարանները սպասարկող անձնակազմի համար ապահովել բոլոր անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցները,
- կահավորել հալման և ձուլման տեղամասերն անվտանգության նշաններով և ցուցադրական վահանակներով,
- ապահովել արտադրամասը՝ առաջնային հրդեհաշիջման միջոցներով և այլ հակահրդեհային հանդերձանքով,
- կազմակերպել գործարանի տարածքում անձնակազմի առաջին օգնության և բուժսպասարկման կետ:

Գործարանի պողպատաձուլական արտադրամասի և հարակից տարածքներում նախատեսված է մոնիթորինգի իրականացում, որի հիմնական նպատակն է ստեղծել տեղեկատվություն շրջակա միջավայրի փոփոխությունների մասին: Շրջակա միջավայրի ամբողջական մոնիթորինգ իրականացնելու համար նախատեսվում է յուրաքանչյուր եռամսյակ իրականացնել կանոնավոր չափումներ /այդ թվում՝ մթնոլորտային արտանետումների, աղմուկի ֆոնային չափումներ/ նույն կետերում, որտեղ իրականացվել է նախնական մոնիթորինգը: Չափումներն իրականացվելու են արտադրական տարածքում /գազամաքրման և օդաքարշ համակարգեր/ գործարանին հարող բնակելի տարածքների ուղղությամբ: Որպես չափվող ցուցանիշներ դիտարկվելու են մթնոլորտային օդում փոշու պարունակությունը և արտադրական հանգույցում՝ վնասակար նյութերի /NO2, CO, ՊՄ/ պարունակությունները: Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված տարեկան ծախսերը գնահատվել են 507200.0 հազար ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկ բնակավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Քննարկման ընթացքում բարձրացվել են հարցեր՝ կապված՝ արտադրամասում աշխատողների անվտանգության ապահովման և Արթիկ համայնքից աշխատողների ներգրավվածության հետ, ինչի վերաբերյալ տրվել են հիմնավոր պատասխաններ: Նախագծային փաստաթղթերի վերաբերյալ փորձաքննական գործընթացում շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, ինչպես նաև առողջապահության, ներքին գործերի նախարարություններից և Շիրակի մարզպետարանի աշխատակազմից ստացված կարծիքները, առաջարկությունները և դիտողությունները ևս հաշվի են առնվել ՇՄԱԳ-ի լրամշակումներում:

Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները՝ հարկ է նշել, որ Ընկերության կողմից նախատեսվող գործունեությունը կարևոր է սև մետաղի ջարդոնի ճիշտ կառավարման տեսանկյունից, քանի որ անկանոն ձևով կուտակված թափոնները հանդիսանալով շրջակա տարածքների աղտոտման աղբյուր՝ վերամշակումից հետո կօգտագործվեն որպես երկրորդային հումք: Նախատեսվող գործունեության համար գործող նորմերով ապահովված է սանիտարապաշտպան գոտու պահանջվող չափը: ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված միջոցառումների, մասնավորապես՝ մշտադիտարկումների իրականացման արդյունքում, վերահսկելի և կառավարելի կլինեն օդային ավազանն աղտոտող վնասակար նյութերի քանակները և աղտոտվածությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Պողպատաձուլական գործարանի շահագործման ընթացքում որպես կարևորագույն պայմաններ անհրաժեշտ է՝

- պահպանել աշխատողների անվտանգության, առողջության ապահովման և հակահրդեհային բոլոր միջոցառումները /ԱԻՆ մարմինների հետ համաձայնեցնել «Արտակարգ իրավիճակների պատրաստվածության» պլանը/,
- պահպանել պողպատաձուլարանի աշխատանքային ռեժիմը և տեխնոլոգիական գործընթացների պայմանները,
- պարբերաբար ստուգել գազամաքրման և օդաքարշ համակարգերի և փոշեորսիչ պարկերի մաքրման արդյունավետությունը և տեխնիկական վիճակները,

անհրաժեշտության դեպքում իրականացնել սարքավորումների կարգաբերում կամ փոխարինում նորերով:

2. Արտադրական տարածքում և գործարանին հարող բնակելի տարածքների ուղղությամբ անհրաժեշտ է ապահովել մոնիթորինգի ծրագրում նախատեսված մշտադիտարկումների իրականացումը և դրանց կատարման ժամկետները՝ վերահսկելու նպատակով մթնոլորտային օդում՝ պինդ մասնիկների, ազոտի երկօքսիդի, ածխածնի օքսիդի կոնցենտրացիաները:

4. Քանի որ ձուլման արդյունքում առաջացող արտադրական թափոնը /խարամ, փոշի/ նախատեսված է հեռացնել աղբավայր, թափոնների տեղադրումն իրականացնել շրջակա միջավայի նախարարության կողմից հաստատված թափոնի անձնագրի համաձայն՝ Արթիկի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայր:

5. Գործունեությունն իրականացնելիս անհրաժեշտ է աաջնոդվել առողջապահության նախարարի՝ 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահպանմամբ:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՍԱՆՆ ՄԵՏ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Արթիկի «ՍՏԵԿԼՈՄԱՇ» գործարանի ձուլման արտադրամասի վերազինման՝ պողպատե ձուլակտորների արտադրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Հերիքնազ Մկրտչյան